ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՂՁՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնք,
ՀՀ Արագածոտնի մարզ, գ.Աղձք, Հեռ. (099)996855 ,

N 52
*20 հունիսի 2016թ.*

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԳԱԲՐԻԵԼ ԳՅՈԶԱԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գյոզալյան.

Ձեզ ենք ներկայացնում Աղձք համայնքի 14/06/2016 թվականի ավագանու N 11-13 որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՍԵՆ ԱՎԴԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՂՁՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնք

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2016թվականի N 11

ԱՂՁՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղականինքնակառավարմանմասին>> ՀՀ օրենքի 12-րդհոդվածով, Աղձք համայնքի ավագանին **որոշում է**

Հաստատել Աղձք համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 14-ի նիստի հետևյալ օրակարգը

1. << ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՂՁՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐՏԻՆ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՍԵՆ ԱՎԴԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՂՁՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Աղձք, (099)996855,

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2016թվականի N 12

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՂՁՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետը <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի՝16-րդ հոդվածի 3-րդ կետը, 34-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները Աղձք գյուղական համայնքի ավագանին **որոշում է.**

Համայնքի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

Հատված 1 **համայնքի բյուջեի եկամուտները**

Համայնքի բյուջեի եկամտային մասում այլ դոտացիան ավելացնել՝ 150,8 հազ. դրամով, համայնքի վարչական տարածքում ինքնակամ շենքերի, շինությունների օրինականացման համար գանձվող գումարը ավելացնել 50,7 հազ դրամով: Արդյունքում բյուջեի եկամուտները ավելացնել 201,5 հազ դրամով, նախատեսված 40 759,8 հազ. դրամի փոխարեն նախատեսել 40 961,3 հազ դրամ:

Տարեսկզբին հողի օտարումից նախատեսված -4 000,0 հազ ՀՀ դրամի փոխարեն նախատեսել -5 533,9 հազ ՀՀ դրամ:

Նախորդ տարիների կատարված կապիտալ շինարարությունից ետ վերադարձված 316,0 հազ ՀՀ դրամ գումարը բյուջեում ավելացնել ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդին՝ 6 446,2 հազ ՀՀ դրամի փոխարեն նախատեսել 6 762,2 հազ ՀՀ դրամ:

Հատված 2 **բյուջեի ծախսերի ըստ գործառնական դասակարգման**

**Բաժին-04 խումբ-5 դաս-1 հոդված 5112** /շենք և շինությունների կառուցում / նախատեսված 17 347,2 հազ. դրամը ավելացնել 1 844,9 հազ. դրամով, դարձնելով 19 197,1 հազ. դրամ:

**Բաժին-09 խումբ- 4 դաս-1 հոդված 4729-ում** /այլ նպաստներ բյուջեից / նախատեսված 1 050,0 հազ դրամը ավելացնել 201. 5 հազ. ՀՀ դրամով, դարձնելով 1 251,5 հազ դրամ:

Հատված - 3**բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման**

**Հոդված 4729-ում** /այլ նպաստներ բյուջեից / նախատեսված 1 050,0 հազ դրամը ավելացնել 201. 5 հազ. ՀՀ դրամով, դարձնելով 1 251,5 հազ դրամ:

**Հոդված 5112-ում**/շենք և շինությունների կառուցում / նախատեսված 17 347,2 հազ. դրամը ավելացնել 1 844,9 հազ. դրամով, դարձնելով 19 197,1 հազ. դրամ:

Վարչական բյուջեի նախատեսված ծախսերը՝ 54 679,0 հազ. դրամը ավելացնել 201,5 հազ դրամով և նախատեսել 54 880,5 հազ. դրամ, ընդամենը բյուջեի ծախսերը նախատեսված 61 125,2 հազ դրամը ավելացնել 517,5 հազ դրամով և նախատեսել 61 642,7 հազ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐՏԻՆ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՍԵՆ ԱՎԴԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՂՁՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

14 ՀՈՒՆԻՍԻ 2016թվականի N 13

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աղձք համայնքի գլխավոր հատակագիծը ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14 հոդվածի 9,10,11,12 կետերի և <<տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37 հոդվածի պահանջներով Աղձք համայնքի ավագանին ***որոշեց՝***

1. Աղձք համայնքում 104 ծածկագրից 0.20 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը համարել փոխված, որպես հասարակական կառուցապատման,Աղձք համայնքում 577-001 ծածկագրից 0.12հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը համարել փոխված, որպես բնակավայրերի կառուցապատման :

2. Հաստատել հողամասի հատակագիծը :

3. Սույն որոշումը և հաստատված հատակագիծը ներկայացնել ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի քաղաքաշինության նախարարություն և Աշտարակի սպասարկման գրասենյակ :

4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի հանձնարարականները ընդունել ի գիտություն կատարված փոփոխությունը ընդգրկել համայնքի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ

2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐՏԻՆ

3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՔԱՋԻԿ

4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՍԵՆ ԱՎԴԱԼՅԱՆ**